ՄԱՅՐԵՆԻ(ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ) ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Դա հատուկ երկարօրյա դպրոց էր, որտեղ երեխաները կարող էին մնալ դասերից հետո ու զբաղվել դպրոցի առարկաների հետ կապ չունեցող հազար ու մի հետաքրքիր բաներով։ Դպրոցը հայտնի էր ուսուցման իր նորարական մեթոդներով և տարբեր ոլորտի խմբակներով՝ նախատեսված տարիքային բոլոր խմբերի համար։
Իմ դպրոցը նույնպես շատ լավ դպրթց է. այնտեղ ես մասնակցում եմ տարբեր խմբակների և պատումի հերոսների նման բացահայտում եմ կախարդական աշխարհների գաղտնիքները, մասնակցում անհավատալի իրադարձությունների։ Սիրում եմ հատկապես ընթերցանությունը, որն ինձ տանում է տարբեր ժամանակներ, պատմում աշխարհի հզորների մասին, սովորեցնում հասկանալ բնության լեզուն։ Ես սիրում եմ իմ դպրոցը և բազում թելերով կապված եմ նրան։
2.Անին սիրում էր կերպարվեստը, քանի որ այն հնարավորություն էր տալիս դրսևորելու իր ստեղծագործական միտքը՝ կենդանություն տալով երևակայական պատկերներին, իսկ Դավիթը նախընտրում էր դժվարին խնդիրներ առաջադրող մաթեմատիկան։ Նրանք միասին հաղթահարում էին բոլոր դժվարությունները, քանի որ հավատում և վստահում էին իրենց և իրենց հավատացող ավագներին։
3.Նրանց նախասիրություններից մեկն էլ գրադարան այցելելն էր՝ իմանալու անթիվ հարցերի պատասխաններ, որոնք գտնում էին հնամաշ կազմերով գրքերում։ Գրադարանը նրանց երկրորդ տունն էր։
4. Անին ու Դավիթը անցյալում հայտնվեցին, երբ գրադարանավարուհի խորհրդով բացեցին կաշվե կազմով գիրքը. հետո Անին մոտեցավ դաշնամուրին և, մաքրելով ստեղների փոշին(ամենայն հավանականությամբ՝ պատմության փոշին), սկսեց նվագել։ Այդ երաժշտությունը նրանց մոտեցնում էր գաղտնիքին, դրա համար էլ վերջին նոտայի հետ բացվում է միջանցքի գաղտնի դուռը, և նրանք հայտնվում են մի անծանոթ աշխարհում, որտեղ միախառնվել էին տարածությունն ու ժամանակը։, Իհարկե, նրանք երևակայությամբ էին հայտնվել այնտեղ, քանի որ քիչ հետո արդեն դասարանում էին։ Գաղտնիքների նկատմամբ սերը բորբոքել էր նրանց երևակայությունը։
5.Տաթևիկը նրանց ցույց տվեց արձանիկներ, որոնք տարբեր ժամանակների հետ հանդիպելու բանալիներ էին։ Այդ արձանիկները նույնպես երևակայությամբ անցյալ գնալու հնարավորություն էին, հմայիլներ, որոնցից յուրաքնչյուրը բացահայտում էր մի աշխարհ։ Արձանիկները ակտիվանում էին համապատասխան կախարդական բառերն ասելուց հետո։ Տիգրան Մեծի արձանիկն ակտիվացնելու համար պետք էր ասել «Ուժ և պատիվ», իսկ Մեսրոպ Մաշտոցի արձանիկի համար՝ «Գիտելիք և լույս» բառերը։
6.

Հոմանիշ	Հականիշ
Նեղ- անձուկ, սեղմ, նեղլիկ	լայն, արձակ,ազատ, ընդարձակ
Մութ- խավար, աղջամուղջ, գիշեր	լույս, առավոտ, շող, ճաճանչ
Բարի- անչար, գթասիրտ, բարեհոգի	չար, վատթար,ոխակալ, նենգ
Փոքր- մանր, քիչ, պուճուր, կրտսեր	մեծ, հսկա,խոշոր, վիթխարի
Դանդաղ- կամաց, անշտապ, դանդաղկոտ	արագ, շտապ, հապճեպ, շուտ
Գաղտնի-թաքուն, ծածուկ, գողունի	բացահայտ, ակներև, անսքող, հայտնի
Գեղեցիկ- գեղանի, սիրուն, չքնաղ	տգեղ, անգեղ, չարագեղ, գեշ
Վատ-անպիտան, անպետք,անախորժ	լավ, ընտիր, լավորակ, ազնիվ
Վեհաշուք- փառավոր, մեծաշուք, փառահեղ	տգեղ, անհաճո, հոռի, անշուք

7.Անին ու Դավիթը գրադարանի գաղտնիքը հայտնաբերում են Տաթևիկի օգնությամբ։ Նրանք հաճելիորեն զարմացան, երբ մեծերից մեկը հավատաց իրենց և սիրով օգնեց։
8.Հայրենիքի սերը ուղղակի զգացմունք չէ, այլ կրակ, որ ջերմացնում է հոգին ր լուսավորում ճանապարհը։ Սիրել Հայրենիքը՝ նշանակում է հոգատարությամբ վերաբերվել յուրաքանչյուր տերևի…… որպեսզի կրակը երբեք չմարի։

9.Իմ երևակայորության մեջ ես ևս հանդիպել եմ մեր պատմության ամենաերևելի արքային՝ Տիգրան Մեծին։ Ես կարկամել էի այդ վեհության առջև և ուշադիր լսում էի արքայի դասերը. մենք կառուցում ենք քաղաքներ, զարգացնում ենք առևտուրը, մեզ հզոր են դարձնում ոչ միայն ռազմական հաղթանակները։ Մենք գնահատում ենք գիտելիքը, արվեստը և ձգտում ենք իմաստության։ Մեր գիտնականներն ու փիլիսոփաները նույնքան հարգանք են վայելում, որքան մեր ռազմիկները։ Երբ ես վերադարձա իրականություն, սկսեցի ավելի լավ սովորել հայ ժողովրդի պատմությունը։ Ես նույնպես հասկացա, որ առանց անցյալի դասերն իմանալու, չենք կարող ապրել ներկայում, առավել ևս՝ պատկերացնել ու կառուցել ապագան։ Ես խոստացա արքային, որ կպաշտպանեմ իր պաշտելի Հայաստանը, կսիրեմ մեր լեզուն, մեր մշակույթը,կպահպանեմ մեր ավանդույթները, քանի որ համոզվեցի, որ «պատմությունը կենդանի գետ է, և ամեն սերունդ իր ներդրումն է ունենում դրանում»։
10.Այս յուրահատուկ պատմությունն ինձ սովորեցրեց լինել ինքնավստահ, արժանապատիվ, համարձակ։ Երբեք չընկրկել դժվարությունների առաջ, հիմնավորապես յուրացնել ուսուցիչներիցշս կողմից ինձ տրվող գիտելիքները, և դրանք օգտագործել իշահ իմ հայրենիքի, իմ հարազատների, իմ ընկերների։ Ես սովորեցի հավատալ ինքս ինձ, սովորեցի ամուր կանգնել հայրենի հողին։
11. Տիգրան Մեծը՝ հզոր, փառավոր, ուժի և իմաստության խորհրդանիշ։
12.Մեր ժողովրդի ու մշակույթի խորհրդանիշներից են Տիգրան Մեծի դիմանկարով մետաղադրամները ։
13.Մետաղադրամի վրա պատկերված էր Տիգրան Մեծի դիմանկարը։ Արքան բացատրեց.«Բայց դա նրանից չէ, որ փառասեր եմ, այլ նրա համար է, որ հիշեցնի յուրաքանչյուր քաղաքացու, թե ինչ մեծ երկրի մաս է ինքը հանդիսանում»։
14.Արքան երեխաներին ցույց տվեց Մեծ Հայքի քարտեզը։ Դա Տիգրան Մեծի կառուցած Հայաստանի քարտեզն էր, երբևէ մեր ունեցած ամենահզոր թագավորության քարտեզը։
15. Այս հարցին պետք է պատասխանի մասնակիցը։
16. Դարաշրջան- դար –ա - շ(ու)րջ- ան
17.Դժվարությունները փոքրիկ ալիքներ են ժամանակի գետի վրա;
Յուրաքանչյուր գիրք նրանց շշնջում էր իր գաղտնիքները։
Ժամանակի պտույտը դադարեց։
18.Հազարամյակ,խշխշոց,դասմիջոց, գրադարանավարուհի,երկարօրյա, ստեղծագործական։
19. Մեսրոպ Մաշտոց, Տիգրան Մեծ, Մեծ Հայք
20. Ավանդություն- ասք, վիպերգ, զրույց
Ավանդույթ- սովորություն
Հետևորդ- որևէ ուղղության հետևող
Հետնորդ- ժառանգ
Մեր բանահյուսության ավանդությունները փրկվել են Քերթողահոր շնորհիվ։
Մեր ժամանակներում էլ են պահպանվել հին հայկական ավանդույթները։
Հայ ժողովուրդը առաջինն է դարձել քրիստոնեության հետևորդ։
Մեր տոհմի հետնորդները կրում են մեր նախապապի ազգանունը։

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան